

Սմբատ Բիւրատ  
Խմբագրութիւն «Փիիհնիկ» Ի  
Աղեֆսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է

Ձեռագիր ԵՏ՝ չ'դարձ  
նուիր

# ՓԻԻԿՆԻԿ

Կը ծախուի ՄԻԿ դրուե ողջի

ՇԱԲԱՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

ՏՐ.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲՎԼ. 8  
Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

Գ. ՏԱՐԻ

6 ՕԿՏՈՍՏՈՍ 1902

Թիի 8

## ԵՐԿՈՒ ԵՐԿՍԵՌՆԵՐԸ

Կ Ա Ս

### ՊՕՂՈՍԵԱՆՆ ՈՒ ԳԱԼՍՏԵԱՆԸ

Երկու Երկսեռները, երկուքն ալ Ազգային, Ազգեքսանդրիոյ ու Գահիրէի վարժարանները, երկուքն ալ մէկէ աւելի անգամներ Մամուլի անողոք վճիռներովը դատապարտուած, սակայն երկուքն ալ, ճակատագրականօրէն յուսիս յոսեցողքով զիմելու սահմանուած կրթական դժբա՛ղդ հաստատութիւններ: Ինչո՞ւ համար:

Այդ «Ինչո՞ւ համար» ներուճն թիւր, գիտնալ պէտք է, ուղիղ կը համեմատի թիւին հետ եկող գացող Առաջնորդներուն, ու կազմուող լուծուող Խորհուրդներուն:

Բայց որովհետեւ մենք այժմէութիւնը պիտի շօշափենք, վարագուրենք անցեալը, ներկային կացութիւնը միայն պարզենք, ու այդ կացութեան պատասխանատուներն անուանելէ ու թուելէ առաջ ջանանք ցոյց տալու թէ՛ Մամուլի քննադատութիւնները — անաչառ ու անկաչառ մամուլին կ'ակնարկեմ — ինչո՞ւ չ'են տուած մինչեւ ցարդ ո՛ր եւ է բարերար արդիւնք:

Անցած տարի, Փիւնիկի յաջորդական թիւերուն մէջ քանի՛ քանի սիւնակներ զբաւեցին սեղիս Պօղոսեան ու Գահիրէի

Գալստեան վարժարաններուն հարցաքննութիւնները: Ի՞նչ եղաւ: Գալստեան վարժարանը վերածուեցաւ նախորդ տարիներու դրութեան, սրուն վրայ երկարօրէն գրած է 1900 ի ՆՈՐՕՐԸ: Ուրիշ ոչի՛նչ. իսկ Պօղոսեանը: Նոր տնօրէն մը բերուեցաւ, տնօրէն մը, որ Հայաստանի, աւելի ճիշտը Քիւրտիստանի խորերը քանի մը տարի ապրելով, կը թուի երկրի Տերեպեյիներէն ընդօրինակած կամ ժառանգած ըլլալ ոգէտներու յատուկ յաւակնոտութիւնն ու պոլիստրայական ռեժիմը, զոր տարիէ մ'ի վեր կը փորձէ ի դորձ դնել հայ վարժարանի մը մէջ, ինչպէս պիտի ըլլար Պօղոսեանը:

Մասաղաչ ու անմեղ մանուկներու ազանջներէն կամ մաղերէն քաշել, սրանէն սենեակը տանիլ, հոն ապստակել, գանակոծել, եւն:

Դասարանի մէջ անմեղ ծիծաղ մը բրբջող պատանի մը շարունակ Չ ամիս դասառութենէ զրկել:

Երկսեռ աշակերտներուն սողեւ ուսուցիչներու երեսին պոռալ, եւն... ու գանգատելու եկող ծնողները փոխանակ քաղցրութեամբ ընդունելու եւ հաճողելու, զանոնք իր վրայէն նետել զրկել ուսուցիչներուն վրայ:

Եռապետութիւն մը կազմած, յաւիտենական Ասքանազի մը հետ ու վարպետ Տուտուի մը, մեր Պատուելի Պէրպէրեանը, 'ի

ներկայութեան ուսուցիչներուն, եւ քանի մը չափահաս աշակերտներուն,

«Երբ Փիւնիկը գեթև ինկած սեւեւեւ, կը կոխեւ վրան ու կը...ն» կը մոլտայ:

Վարպէտ Տուտուն արհամարհոս ժպիտ մը շրթունքին. «Ս' ես չեւ կոխեր, այլ բեշերս քօրուերով կ'անցնիւ քովեւ», կը պարծենայ:

Գրաբարի կոթող անհասկանալի Ասքանազը մտիկ ընե'նք.

«Վաղը կը սեւեւեւ, «Իպրոց»ս հաւեւեւ, կը ցուցընեւ Փիւնիկին», կ'սպառնայ խոտոտադէմ ու պոստեալ յօնիւր ( Ի յարգանս գրաբարին):

Ահաւասիկ Պօղոսեանին անօրէնները. դեռ Ի'նչ կ'ուզէք որ արտադրէ ասոնց ձեռքը յանձնուած դպրոցնիս:

(Շարունակելի)

### ՊՐԻԻՔՍԷԼԻ ԳՕՆԿՐԷՆ

#### Գ. ՕԳ

Նիստը կը բացուի Տ. Հուլիոս տը Լըհէյի նախագահութեան տակ: Կազմութեանը կը ձեռնարկուի նոյնպէս միջազգային առժամեայ Գօմիթէի մը, արդէն գոյ եզոյ բոլոր Գօմիթէներուն միջև համաձայնութիւն մը հաստատելու սահմանուած, և նպատակ ունենալով զանազան ազգայնութեանց կառավարութիւնները հրաւիրել երաշխաւորելու Հայերուն իրաւունքները: Ահաւասիկ բազազրութիւնը սոյն գօմիթէին, եթէ իշխանակուած անձերուն կողմէն ընդունուի այն:

Յրանսա. Տեառք Տընի Բօշէն, Լավիս, ա'էթուրնեւ տը Գօնադան, Սանպա, տը Բըհսանսէ, Վաղէյեր:

Պէշնիֆա. Տեառք, Լըթէոն, նախկին նախարար, Հուլիոս տը Լըհէ, Տերակուտական և Լա Փօնդէն, երեսփոխան:

Հոյանսա. Տեառք, Կանոնիկոս Շէփմէն, Թրէշտրա, Լիյթիթինգ, տը Ռէալ Մէյթիդ, Վան տէր Վլիւկտ, ուսուցիչ Լէյտի Համալւարանին, անօրէն Էօրէ. քէեթիւն Հոլանաային համար:

Իերմանիա. Տեառք Լուավիկ Վօն Պար, Փօրսդէր, Պէպէլ, Պէրնշդայն, Իսայիա. Տեառք Էնրիկօ Ֆէրրի և Մօնէրա:

Անգլիս. Տեառք Կանոնիկոս Սդօդ Հօլլէնա, Նօրմէն, Մալգօմ, Մադ Գօլ, Ճ. Պըրնս, Բէյր Հարտի, Ճէյմս Պրայս, Բէրսի Պընդինկ, Սդիվինսըն, Ռէտմօն:

Աւստրիա. Տիկին Պառոնուհի Սուդնէր, Տր. Ատլէր:

Տաւրմարֆա. Շ. Տ. Հէննինկս, Հակ և Պ. Նէտիքձըն:

Զուիցերիա .Տ. Տ. Լարտի և տը Գըրդէնս:

Տ. Բիէն Բիյեար կը կարգայնամակ մը Էդուարդ Պէրնշդայնի, ալման ընկերվարական երեսփոխան, որ վերջին պահուն ստիպիչ դործերով արգիլուած է դօնկրէն դալէ:

Ինչ որ ամենէ առաջ պէտք է, օգնութեան դալու համար Հայերուն, կ'ըսէ Տ. Պէրնշդայն, յազմե'լ է նախապաշարունակներուն որոնք սակայն դեռ կան, մանաւանդ Իերմանիոյ մէջ, այս գժբազգ եղբայրներուն նկատմամբ, և բողոքե'լ եւրոպական ազգերուն յուրօրանկալութեան դէմ, որ կը զրկէ զիրենք պաշտպանութեան ամեն կերպ միջոցներէ:

Կարգացուեցաւ Տ. Գլէմանսօի — Ֆրանսա մնալու ստիպուած, հիւանդութեան պատճառով — մէկ նամակը, որով կը խարանէ թուրք քաղաքականութիւնը:

Վերջապէս հեռագիր մը մեծանուն իրաւագէտ Լէյտի Տ. Վան տէր Վլիւկտի յանուն Խաղաղութեան հալանտական դաշնակցութեան:

Յետոյ, ժողովին առջև կը հանուի Յանձնախումբէն առաջարկուած որոշմագիրը, (որուն պատճէնը տըւած ենք արդէն նախորդով):—

Տ. Փօրէս, ընկերվարական կուսակցութեան անունովը բեմը կ'եղնէ:

Տ. ԺՕՐԼՍԻ ՃԱՌԸ

Տիկնա՛յք, Տեա՛րք,

Ես ինձէն կը խնդակցիմ որ հայկական հարցը վերջապէս դուրս ելած ըլլայ մթութեան ու անտարբերութեան շրջանէն :

Սկիզբը, երբ որ հարցը վեհերոտորէն դուրս ել, Տ. Տ. Տընի Գօշէն, սը Մէօն ու ես, յուզուեցանք մամուլին մեծ մասի մը լուութենէն, այն ատեն որ հաւաքակի խժոժութիւններ կը գործուէին Փոքր Ասիոյ մէջ: Այս մամուլը, կախուած ու սարուկ, կը լռէր, սրովհետեւ եթէ անի դէպքերը քննած ըլլար, պիտի չը համարձակէր շատաքովել Սուլթանը: Մեր ձեռնարկած դիմումներէն ատեն մը յետոյ, Թուրքիոյ դէպքերուն նուիրուած Դեղին Տետրակին մէջ կը կարգայինք հեռագիր մը, միակը քիչ մը խիստ, զոր Արտաքին Գործերուն մեր նախարարը Դրան ուղղած ըլլար: Ու եզական իրողութիւն մ'է հաստատել թէ ինչ ահագին ժամանակ պէտք եղած է լսեցընելու օրինաւոր սրտմտութեան ազազակներն ու տեսնելու թէ՛ մարդկութեան ցանցնուած բեկորները զիրար կ'անգիտանան այսպէս մինչև այն օրը, ուր, իրենք զիրենք քաղաքակերթ կարծող ազգերը քանի՛ քանի ճիգերէ ետք կը յաջողին միացնելու կապերը, զոր կառավարութեանց անասնութիւնը քակած էր: Հիմակ Եւրոպան ի հարկէ իմացաւ, ու ինք խորապէս չարագործ պիտի ըլլար, եթէ ազգարարութիւններէն ետքը, չը դարձէր:

Յաճախ կ'իմանամ որ ժողովուրդներուն կարեկցութիւնը կը ցցեն կառավարութեանց յանցապարտ անգործութեան դէմ: Ասոնք ժողովուրդոց համար չափազանց չորսքորթ բազդատութիւններ չեն (ծափեր): Այո՛, ժողովուրդները, որոնք իբր թէ յուզուեցան միջազգային այս խոշոր ոճիրներէն, ա՛յնքան յանցաւոր են որքան կառա-

վարութիւններն իրենց անզգայութեան մէջ, ու անո՛վ իսկ ասոնց մեղսակիցները կ'ըլլան իրենք:

Հոս, Պէրլինի դաշնագրին ՅԼԻԳ. յօդուածը յստակօրէն ցոյց կուտայ օրինաւորութիւնը մեր պահանջումներուն: Անով կրնանք մենք իրագործել ազգերուն իրաւունքին համաձայնութիւնը մարդկային խղճմտանքին ձայնին հետ: Այսպէս, անո՛վ կը կոչենք կառավարութիւնները դէպ ի մարդկութեան և դէպ ի իրենց իսկ յարգանքը:

Բարենորոգումները, զորս պէտք է պահանջենք, կրնան իրականանալ առանց վրաս մը բերելու թուրք հողին: Ես դիտեմ թէ՛ ոչ միայն Հայաստանի, այլ և բոլոր ճնշուած ցեղերուն վերաբերմամբ՝ պէտք է մարտնչինք ու յաղթենք առանց պատերազմի:

Աշխարհի մէջ կա՛ն ամբողջ զանգուածներ ժողովուրդներու, որոնք բրտօրէն քեցուած վտարուած են իրենց բնիկ երկրէն: Շէշվիկ Հօլշտայնն է, Բլոչնիա՛ն է, որուն վրայ երե՛ք անգամ, երե՛ք ազգեր մոլեղենցան որսկան դազաններու պէս: Ալզաս - Լօռէնն է, պատերազմով անջատուած Ֆրանսայէն. բոլոր այս ժոշոյուրդներն իրաւունք ունին շարագոյն քաղդի մը. ասոր պիտի հասնին ոչ թէ պատերազմով, այլ ներքին բարեկորդումներով, զորս պիտի ձեռք բերենք եւրոպական կառավարութեանց վրայ հանրային կարծիքին հաւաքական գործողութեամբ:

Հայաստանի վերաբերութեամբ, մեր ձայնը պիտի լսուի: Այս ժամուս, դժուար կը թուի հաստատել թէ՛ անկէ մեզէ եկող ազազակները՝ լոկ Թայմըզի ելերքներէն մեկնած մամուլի պայքարի պարզ մը արձագանգն են, ճիշդ է ընդհակառակն, ըսել թէ՛ ազգերուն եսամոլութիւնը միշտ արթուն է, ու եթէ քաղաքակրթուած ազգերուն ամբողջութիւնը միահամուռ կարծիք մը

կը դաւանի, պատճառն այն է որ տա-  
րակոյս չը կրնար ա՛լ սաւառնիլ Թրքա-  
հայերուն պահանջումներուն ընու-  
թեանը վրայ :

Ինչ առ քիչ առասպելները կը  
փարատին, նախապաշարումները կը  
նուազին: Ատեն մը գերման ընկերվա-  
րայն կուսակցութիւնը վարանոտ ե-  
ղաւ Հայերուն հանդէպ: անի կը կար-  
ծէր թէ՛ այս գրգռումը գրսէն կու-  
գար ու հոն կը տեսնէր ձեռքը Ռու-  
սիոյ, զի այս հարցին մէջ, ինչպէս նա-  
և հոգեկոչութեան (սքիրիդիզմ) նիւ-  
թերու մէջ, ամեն տեղ, ձեռքերու ե-  
րերալը տեսնել կը կարծուէր:

Յօդուածներն ու ճառերը և Պէր-  
նչգայնի նամակը, որ նոր կարգաց-  
ուեցաւ, կը փարատեն հիմակ ամեն  
տարտամութիւն: Գերման ժողովուրդին  
աչքերը բացուեցան ու Յայնկոյս-Հու-  
նոսի ընկերվարական մեր եզրայրները՝  
վերջինները պիտի չըլլան մեր կոչին  
պատասխանողներուն:

Ինչ պիտի ըլլայ Հայերուն նկատ-  
մամբ Ռուսիոյ դիրքը: Կը համարձա-  
կիմ ըսել, կախուած է այն՝ Պրանսա-  
յինէն. առանց այս երկու ազգերուն  
ազդու միջամտութեան մը, չը կայ  
Փրանքուուս կարելի գաշնակցու-  
թիւն, քանի որ այն պիտի հիմնուած  
չըլլար արդարութեան վրայ ու մարդ-  
կութեան անբռնարարելի իրաւունք-  
ներուն վրայ:

Կը կրկնեմ, չենք ուզեր պատե-  
րազմ, զի անով պիտի թուիչ տայինք  
բոլոր որսկան թաշուններուն, որոնք կը  
հսկեն մեծ կայսրութեանց ծոյր. մենք  
պատերազմէն լաւագոյնն ունինք, ու-  
նինք դիւանագիտական բնագիր մը:

Կրնամ ես հաստատել, առանց  
շովիւնականութեան, թէ՛ շատ բան կը  
յուսամ Պրանսայէն, եւրոպական հան-  
րային կարծիքին հաւաքական գործ-  
ղութիւնը թելագրելով:

Անի պիտի կրկնապատկէ ի Հայ-

աւտան հիւպատոսական կայանները,  
սկիզբ մըն է այս. բայց պէտք չէ  
կանգ առնել ճամբան ու Պրանսան  
պարտի աւելի՛ հեռուն երթալ եթէ  
չուզեր շեղիլ պատիւին օրենագիրքէն,  
որ դարերէ ի վեր, զանի կը զօդէ աշ-  
խարհի ճակատագիրներուն. . . :»

Սրահը կը թնդայ խանդավառ ծա-  
փերով ու կը փառաւորէ ատենաբանը  
որ բեմէն կ'իջնէ:

Տ. Փ. տը Բրէտանսէ կը յաշորդէ  
անոր. (իր ճառին թարգմանութիւնը  
պիսի հրատարակեմի յաջորդով):

### ՕՐԱԿԱՐԳԸ

Փիւնիկի նախորդ թիւով հրատա-  
րակուեցաւ արդէն Գօնկրէին առաջին  
որոշմնագիրը:

Տ. տը Բրէտանսէ հետեւեալ Օրա-  
կարգը կը ներկայէ.

«Գօնկրէն,

Գոհունակութեամբ նկատի առ-  
նելով Պրանսային ու Ռուսիոյ կողմէն  
վերջերս ձեռք առնուած միջոցը՝ բազ-  
մապատկելու համար իրենց հիւպատո-  
սական գործակալներուն թիւը Հայաս-  
տանի մէջ, կը հրաւիրէ իր անդամնե-  
րէն անոնք որ մաս կը կազմեն օրէնս-  
դիր ժողովներուն, իրենցմէ իւրաքան-  
չիւրին կառավարութիւնէն պահանջել  
համանման միջոցներ:»

Տ. Բիէռ Գլոյեար կ'առաջարկէ  
ժողովին, հետեւեալ օրակարգին քուէ-  
արձութիւնը.

«Գօնկրէն, հաղորդելով եւրոպա-  
կան մամուլին քուէարկուած որոշմնա-  
գրերուն բնագիրը, կը յուսայ թէ եւ-  
րոպական թերթերը, արդարութեան  
ու մարդասիրութեան ոգւով մը, պիտի  
տան ամենալայն ու ամենէն աւելի  
բարեացակամ բաժինը Հայաստանի լու-  
րերուն, որոնք իրենց պիտի հաղոր-  
դուին մնայուն Յանձնախմբէն:»

Տիկին Սէվրին կ'աւելցնէ.

«Գաղափարը գերազանց է: Որպէս

զի բոլորովին դործնական ըլլայ, կը  
խնդրեմ որ ցանկ մը բացուի օրաթեր-  
թերուն իրենց սեփականատեարց ա-  
նուններովը, որոնք պիտի անձնագէս  
թախանձուին, այս հաղորդուած լու-  
րերուն արտագրութիւնը ձեռք բերե-  
լու համար:

Ու այսպէս, յաջորդ տարուան  
Գօնկրէին մէջ, պիտի կրնանք հրապա-  
րակաւ տախտակին դամել անուններն  
անոնց որ զայն ըրած պիտի չըլլան:

Ժողովը՝ Պրիւքսէլը կ'ընտրէ կեդ-  
րոնական գօմիթէին համար, իբրեւ  
գումարումի վայր իր յաջորդ Գօնկ-  
րէին: Տ. Բ. Քիյեար պաշտօն ունի ներ-  
կայացնելու Մնայուն Գօմիթէն ու հաս-  
տատելու մշտատե յարաբերութիւններ  
անոր անդամներուն միջև:

Տ. Տըլրիէ կը շնորհաւորէ Կար-  
գաղի մասնախումբը: (Ծափեր):


Տ. Քիյեար գովեստը կ'ընէ Դանի-  
ացիներուն, որոնց կը պարտին այդ  
օրուան միջազգային գումարումին նա-  
խաձեռնութիւնը: (Նոր ծափեր):

Տ. Հազօ տը Լըհէ. — Չ'ենք ըսեր  
մնա՛ք բարով, Տեա՛րք, այլ ի տեսու-  
թիւն, յաջորդ տարին:

Նիստը վերջացու ժամը 4<sup>1/2</sup>ին:  
1902ի Գօնկրէն փակուեցաւ: (Դ'Եօրօքէէն)

ԿԱՐԴԱԼ Le Journal 20 Յուլիսի  
մէջ Mme SEVERINE ի սրտաշարժ ու  
շահեկան յօդուածը ՀՍՅԱՍԻՐՍՅ ՀԱ-  
ՄՍԺՈՂՈՎԻՆ վրայ:

### ԳՐԸՍ ԶԲՕՍԱ ՆՔ



### ԿԱՐՕ

Կարճէն աւելի երկար, նիհարէն  
աւելի գիրուկ է Կարօ որ՝ Ափրիկէի  
չ'գիտեմ ո՛ր անկիւնէն եկած, հոս  
մութմուտը հագուստով, պերեւշտները  
ոլորած, շուտափութիկ քայլերով եւ

գիտնական-լէզուագէտի հովեր առած  
կը պտըտի ամեն դի՛ իր սիրտը յենի ի-  
րաւունքը ամուր կապերով վերջնակա-  
նապէս կապելու գիտաւորութեամբ:

Կարօյին ելուկացը և շարժուձե-  
ւերը, գէթ միջին դասակարգին մէջ,  
աղջկան տէր եղող մայրերուն ուշա-  
դրութիւնը հրաւիրելու չ'են ուշանար:  
Իսկ իր խոստումները ասոր անոր՝ ա-  
պագայ գործարանին մէջ գործ տալու  
համար, կարծեցնել կուտան հասարա-  
կութեան՝ յանձին Կարօյի՝ լաւ դիրքի  
տէր մէկու մը մէջ լաւ տրամադրու-  
թիւններու, առողջ գաղափարներու  
տէր մէկը: Փութկուտ է նա ու վճռա-  
կան իր ամեն մէկ գործին, և շատա-  
խօս լինելու չափ աճապարար ու ա-  
րագ՝ իր խօսքերուն մէջ: Կարօ՝ հա-  
ւասար ճարպիկութեամբ՝ արանց ու  
կանանց ընկերութիւններու մէջ մտնել  
կը կարծէ անխտիր: Ինքն իր հաշտոյն  
ամեն բան է նա. — վաճառական,  
գրագէտ, գործարանատէր, օրագրող,  
յանձնարարակատար ու լեզուագէտ:  
Մարդու չ'տար Կարօ ինքնիրեն տուած  
այս տիտղոսներէն մանաւանդ վերջ-  
նոյն հմտութիւնը, որուն թուումն մա-  
սանցին մէջ առաջին տեղը կը դրուէ  
Ֆրանսերէնը և զոր չարչրկելու ատեն  
վեր վեր կ'եղնէ Լա Ֆօնդէն իր գե-  
րեզմանէն ու Բադուան ու Կոյուան  
պաղած ապուրի մը պէս վար կը թափ-  
թըփին իր բերնէն: Ու ամեն անգամ  
որ այս խառ՛ուք-թափթփուք բերնէն  
փսխուելու ատեն Կարօյի՝ իր լեզուա-  
գիտութիւնը կը յիշեցնեն, Բրօքսէլի  
հովեր առած՝ նա չ'վարանիր վայրկե-  
նապէս՝ եռասէր գոհունակութեամբ մը՝  
ինքզինք յանձնարարելի ներկայացնե-  
լու գէմը ելնող ո՛ր և է մէկու մը:

Այս են Կարօյի վրագ թողած  
ուպաւորութեան հետ ինքն իրեն հո-  
վեր մ'առնելու իրաւունք տուող յատ-  
կութիւնները:

Մի՛ կարծէք սակայն որ մեր հե-

րոսը գերագոյն ընտրողութեան մ'առ-  
ջեւ իսկ — որուն համար եկած էր  
մասնաւորապէս — պահ մը կանգ առ-  
նելու դանդաղութիւնը կ'ունենայ: Նա  
լաւ գիտէ առիթէն օգտուիլ. — մէկ  
օրուան մէջ իր հասարակութեան վը-  
րայ թողած տպաւորութեան շնորհիւ  
կը մտնէ այն ամեն տունէն ներս, ո-  
րոնց մէջ պիտի կրնայ գտնել բարա-  
խող սրտեր Մեծ Այոյին համար:

Կարօ սրտին հետ ձեռքը տուած  
է օրիորդի մը վերջապէս, որուն հետ  
մեղրալուսինը կը մտածէ անցընել օր  
մը՝ իր բանալիք գործատեղւոյն երկ-  
սենեակ յարկաբաժնին մէջ:

Վ. Վ. ՇԱՄԼՆՅԱՆ

## Ք Ր Ո Ն Ի Կ

— ԱՐՁՈՒՄԱՆ ՏԷՄԻՐԵԱՆ Պրուսացի  
Հայր քանի մը օր առաջ մահմետականու-  
թիւնն ընդունեց:

Այս երիտասարդը սարիէ մ'ի վեր Ե-  
գիպոսս եկած, Տիար Մկր. Յակոբեանի  
գինետունը 4—5 ամիս ծառայելէ վերջ,  
Գահիրէէն իր հայրենակիցները գայով ու  
խեղճութեանը գթալով կը տանին հոն ու  
գեղարանի մթերանոցի մը մէջ կը գնեն:

Երկար պիտի ըլլար թուել այս հա-  
ւատուրացին շահատակութիւնները թէ՛ հոս  
եւ թէ՛ Գահիրէ: Վերջերս Ամերիկա եր-  
թալու համար, Այքատախնամէն ճամբու  
ծախքը կը պահանջէ եւ կը մերժուի: Ի  
վերջոյ, Ազգ. սնտուկէն կիս ոսկի կ'ստա-  
նայ, ուրիշ ընկերոջ մը հետ Գահիրէ վե-  
րադառնալու համար: Առանց ընկերոջ իմա-  
ցընելու, կ'երթայ ուղղակի կառավարու-  
թեան դուռը մահմետականութիւն ընդու-  
նելու:

Երթա՛յ բարով. ատանկ Հայերը պա-  
կաս թող ըլլան ազգին մէջէն:

Սակայն, այս խնդրոյն մէջ ալ մեր  
Ս. Առաջնորդին աւանդական անհոգու-  
թիւնը կը փայլի:

Կառավարութեանէն, ըստ սովորութեան  
կանխաւ կ'ազդարարուի մեր բարեխնամ

Ազգ. իշխանութեան, քահանայ մը զրկել  
Արզումանը համոզել ու հրաժարեցնելու իր  
առաջադրութենէն: Առաջնորդնիս, փոխա-  
նակ քահանայի, մեր Չառաշին օգնականը,  
Ստեփան աղան կը զրկէ անոր քրիստոնէու-  
թեան ճշմարտութիւնն ու մեր հաւատքին  
սրբութիւնը քարոզելու համար: Եթէ Ստե-  
փան աղան ալ միւս Չառաշին պէս բացակայ  
ըլլար եկեղեցիի շրջափակէն, դոնապան  
Հասան աղան պիտի զրկուէր արդեօք:

Մենք կը ցաւինք ո՛չ թէ Արզումանի  
մը կորուստին համար, այլ մեր Ս. Առաջ-  
նորդին անտարբերութեանը վրայ, կրօնա-  
փոխութեան այսպիսի փափուկ խնդրի մը  
մէջ որ նորին Սրբազնութեան մասնաւոր  
ուշադրութեան արժանի էր գոնէ, առանց  
վսեմ. Իօղոս բաշային կամքը հարցնելու:

— ՊՐԻԻՔՍԷԼԻ կարևոր թերթի մը  
մէջ հրատարակուած 29 Յուլիսի հե-  
ռագրի մը համեմատ՝ Անգլիան, Ֆը-  
րանսան ու Ռուսիան վերջերս ազգու-  
ծանուցապիւր մը տուած են Դրան, Հա-  
յաստանի կայութեան վերջ մը գնելու  
և բարենորոգումներուն գործադրու-  
թիւնը փութացնելու պէտքը շեշտե-  
լով:

— Կիլիկիոյ կողմերէն եկող ճամ-  
բորդներ կը պատմեն թէ՛ թուրք կա-  
ռավարութիւնը փութով առաջ կը տա-  
նի ծովեզերքի ամրոցներուն շինու-  
թիւնը: Հալէպի հոչակաւոր Աշի քա-  
շան (որ Ձեթունի վերջին դէպքե-  
րուն շնորհիւ բարձրացաւ Քէրիզու-  
թեան աստիճանին) հետն ունենալով  
Անթաքիոյ երեւի մահմետական անձ-  
նաւորութիւն մը, Սուետիա իջեր է,  
զօրանոցի մը հիմնարկութեան, որուն  
շինութեան համար բուն ու առանց  
վարձքի կը գործածէ տեղին ու շրջա-  
կայքի հայ գործաւորները:

Ասով իրագործուիլ կ'սկսի Կիլի-  
կիան ծովին կողմէն ալ պաշարելու  
նպատակով տարիներ առաջ գծուած  
թրքական ծրագիրը:

— ՀԱՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄ-  
ԲԸ ամսոյս Ցին, ուրբաթ իրիկուն փա-  
մը Ծին Բիրաւիսի մէջ պիտի ներկա-  
յացնէ Սիրոյ Չոկերը: Ո՛չ թատերա-

խաղին, ո՛չ ալ դերակատարներուն վրայ բառ մը կրնանք գրել առ այժմ։ Սակայն ազդր, զոր կարգացինք, ապըստամբեցուց մեզ իր տգեղ վերջաբանով։ Այս նորածին սիրողները, դեռ արուեստին այբուբէնը չը հեգած՝ արդիւսէ հովերով թռչելու ելեր են ու, ա՛լ պէտքը չ'են տեսեր Ս. Պէնչեանի մը, որ Արեւելեան Թասրոնիսն տարեկից, թատերաբեմը ճերմկուցած է մաշկերը։

Մենք Տիար Ս. Պէնչեանի ընկերային կամ անհատական կեանքը քըննադատելէ առաջ, պէտք է ընդունինք որ այսօր փորձ դերասան մըն է, ունի իրեն յատուկ դերերը, կրնայ մանաւանդ պատրաստել դերասաններ։ Մերունի դերասանը, ունենալով հանդերձ մէկէ աւելի թերութիւններ, քանի մը դիժդուիս, տաքարիւն ու թուշտուն տղաներէ անարգուելու աստիճան չ'կրնար ստորնացած ըլլալ։ Ի՞նչ կը նշանակէ, կ'աղաչեմ, ըսէ՛ք, ի՞նչ կը նշանակէ հրապարակաւ յայտարարել թէ՛ Ս. Պէնչեան մեկուսացուած է... Ընէ։ Ամօ՛թ է ամօ՛թ, սիրողներ ըլլալէ առաջ՝ ջանացէ՛ք մարդավարութեան ու պատշաճութեան, ինքնաճանաչութեան ու ընկերակա՞նութեան տարերքը սովորել, պարոններ։

Կ'երևի թէ շատ պիտի զբաղեցընէք մամուլը, ձեր արտառոց կատակներով ու խոչ՛մը քայլերով... :

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ**

ԷՍԹ ՈՒՆԷՍԹԻ

Բարից 23 Յուլիս 1902

Մերայինք։

Տիգրանակերտ (Գործակալութիւնս յատուկ թղթակցէն) — «Մեր քաղաքը սազնապի մէջ է որովհետեւ ահագին վստակ մը կը սպառնայ անոր։ Ղա-

րագոյի աղան պատերազմի ելար Աղայի Զօրի վրայ եւ թաշակեց անոր բոլոր գիւղերը։ Կոխ ու կոտորած։»

Ահաւասիկ պարունակութիւնը նամակին զոր առինք երեկ չէ առջի օրը։

Ղարաղօջ կամ Գարագէօջ փոքրիկ քաղաք մ'է գայմագամանիստ, և որ կը գտնուի Տիգրանակերտի և Սէվէրէկի մէջ տեղը։ Այս տեղի աղան — զարմանալու չէ այդ աղա բառին վրայ որովհետեւ գիտնալու է թէ Տիգրանակերտի բոլոր նահանգը բաժնուած է ազայներու միջև. դեռ 30-35 տարի առաջ Տիգրանակերտ քաղաքին աղան էր Հազրօի Պէկը որն այսօր նորէն քաղաքիս հիւսիս — արևելեան կողմը ահագին անկախ իշխանութիւն մը ունի։ Մեր նահանգին մէջ ամէն գիւղ և ամէն քաղաք իւր աղան կամ պէկը ունի — որ Սուլդանէն վաչալի տիրազսն ստացեր է, համիտիյէներու հրամանատար է և կը կոչուի Աղայի Ղարաղօջ։ Գալով Աղայի Զօրին, սա ալ Զօրի աղան է։ Զօրը փոքրիկ քաղաք մ'է կամ խոշոր գիւղ մը 5-600 տունէ բաղկացած և կ'իյնայ դէպի Մէրտինի կողմերը։ Մինչև հիմայ անյայտ մնացած պատճառով մը Ղարաղօջի աղան գլուխը հաւաքելով քանի մը հազար հոգի, յարձակեցաւ Զօրի աղային վրայ, անոր բոլոր գիւղերը մէկ երկու օրուան մէջ ոչնչացուց։ Զօրի աղան բնականաբար դիմադրեց և սարսափելի կռիւներու մէջ քանի մը հարիւր մարդիկ մեռած են երկու կողմէն ալ։ Զոհուած գիւղերու մէջ կը գտնուին Հայու, Ասորիի, Բիւրտի և Թուրքի գիւղեր։ Զօրի աղան բոլորովին յաղթուած է, իսկ Ղարաղօջի աղան իւր յաղթութենէն հպարտացած աչքը դրեր է Տիարպէքիի վրայ։ Իւր խառնիճաղանճ ամբոխով հասած է քաղաքիս (Տիգրանակերտ) շուրջը, մէկ ժամ հեռաւորութեան վրայ, և ասոր համար մնք տագնապի մէջ ենք։ Քա-

ղաքիս Վալի — Փաշան շքախմբով մը  
գնաց Ղարաղոջ աղայի հետ բանակցե-  
լու: Բանակցութիւնը դեռ կը շարու-  
նակուի:

Քաղաքիս բոլոր բնակիչները Հայ,  
Թուրք, Ասորի, Ղպտի, Արաբ և ու-  
րիշներ՝ սարսափի մէջ են, որովհետեւ  
կը վախցուի որ ամբողջ քաղաքը թա-  
ւանի երթայ, առանց խորուրթեան:

### ՅՐԷԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Անցեալ տարի Յրանդօ — Թուրք  
միջադէպին առթիւ Ֆրանսական կառա-  
վարութիւնը բարի գաղափարն ունե-  
ցաւ իւր հողէն, և մանաւանդ Բարի-  
զէն Թուրք լրտեսներու ջոկատը աւելի  
լաւ է ըսել՝ բանակը — արտաքսել:  
Ժամանակ մը Բարիզ մաքրուեցաւ այդ-  
օտար արարածներէն: Բայց քանի մը  
ամիսներէ ի վեր կամաց կամաց նոր  
սկսան գալ այդ գարշելիները: Մեզ  
մի քանի տեղերէ լուր եկաւ թէ լըր-  
տեսներ և ոստիկաններ (Թուրք) այ-  
ցելութիւններ կընեն եղեր Բարիզա-  
բնակ Թուրքերու և թրքահայատակ-  
ներու... անոնցմէ զանազան տեղե-  
կութիւններ առնելու:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ ԲԷԿ

### Ա Ձ Ղ

Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ  
է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգ-  
լերէնի խիստ զսնացուցիչ և զիւրամատ-  
չելի պայմաններով:

Փափագողները գիտեն Փիւնիկի խմբա-  
գրութեան:

### ՎԵՐՋԻՆ Ա.ՁԴ

Արտասանմանի մեր բաժանորդներէն,  
հակառակ ա՛յնքան ազդերու, ա՛յնքան դի-

մուսներու, չը ստացանք ցարդ ո՛չ մի ման-  
սարօսք:

Յարգելով զիրենք և լրագրական սո-  
վորութիւնը, մենք իրենց կանոնաւորա-  
պէս զրկած ենք թերթ, զոր չ'են վերժած,  
այսինքն ընդունած են:

Մերժողներուն անմիջապէս դադրեցու-  
ցած ենք թերթին առաքումը, իսկ չը մեր-  
ժողներուն բնականաբար պարտաւորուած  
ենք կանոնաւորապէս շարունակել առա-  
քումը:

Արդ, վերջին անգամ մըն ալ կը դի-  
մենք մեր Պատ. բաժանորդներուն, խնդրե-  
լով որ ա՛լ հաճին վճարել պարտքերնին.  
Իսկ եթէ մտադրած են թերթը ձրի կար-  
դալ, գոնէ թո՛ղ ազնուութիւնն ունենան,  
մերժելու դայն, որով ազատած կըլլան մեզ  
թուղթի ու թղթատարութեան բոլորովին  
աւելորդ ծախքերէ:

Թո՛ղ վստահ ըլլան, մենք իրենց ա-  
նունները չ'ենք հրապարակեր:

### ԳՈՂ ՄԺԴՕ

Դարառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՑ

Ընդ մաշիով է այս վէպը, որ մօտերս  
պիտի լոյս տեսնէ Արախ տպարանէն:

Բաժանորդագրուիլ փափագողները  
5 զրշ.ի նամակագրօջմ կընան զրկել  
Փիւնիկի հասցէին:

### «ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛  
հայերէն, թէ՛ գաղղիերէն և  
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն  
տեսակ տպագրական գործեր  
կը կատարէ մեծ խնամով եւ,  
ինչ որ նուազ կարեւոր չէ,  
ԽԻՍՏ ՉԱՓՍԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ: